

1.2.2. **Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2000թ. հունվար-սեպտեմբերին, փաստացի գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի տվյալներով, կազմել է 195,1 մլրդ. դրամ, որը 1999թ. մակարդակին զիջել է 3,7 տոկոսով, 2000թ. սեպտեմբեր ամսվա համախառն արտադրանքը կազմել է օգոստոս ամսվա 107,8 տոկոսը (համադրելի գներով): Գյուղատնտեսության համախառն արտադրանքի նվազումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ բուսաբուծության համախառն արտադրանքի նվազմամբ, որը 1999թ. մակարդակին զիջում է 11,2%-ով, իսկ անասնապահության համախառն արտադրանքը գերազանցում է 1999թ. մակարդակը 5,9 տոկոսով: Բուսաբուծության համախառն արտադրանքի նվազումը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ բացատրվում է տևական երաշտով, որի հետևանքով նախորդ տարվա համեմատությամբ զգալի պակասել է հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքը, որը կազմել է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 74,0%-ը, կարտոֆիլինը՝ 59,8%, բանջարեղենինը՝ 91,8% և բոստանային մշակաբույսերինը՝ 66,3 տոկոսը:

Գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված «Բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին» վիճակագրական հաշվետվությունների տվյալներով, 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ, հանրապետությունում հնձվել է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների 84,4%-ը (155034 հեկտար), ստացվել է 198957 տոննա համախառն բերք, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 269008 տոննայի դիմաց: Մեկ հեկտարից միջին բերքատվությունը կազմել է 12,8 ցենտներ, նախորդ տարվա 16,2 ցենտների դիմաց: Ընթացիկ տարում, ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների, տևական երաշտի հետևանքով, հատիկի համար չհնձված հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի տարածությունները կազմել է մոտ 36000 հեկտար:

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքահավաքի ընթացքը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ

(տոննա)

Մարզերի անվանումը	Հացահատիկ		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Բոստան		Պտուղ		Խաղող	
	արտադրվել է 1.10. 2000թ. դրությամբ	1.10. 1999թ. նկատմամբ	արտադրվել է 1.10. 2000թ. դրությամբ	1.10. 1999թ. նկատմամբ	արտադրվել է 1.10. 2000թ. դրությամբ	1.10. 1999թ. նկատմամբ	արտադրվել է 1.10. 2000թ. դրությամբ	1.10. 1999թ. նկատմամբ	արտադրվել է 1.10. 2000թ. դրությամբ	1.10. 1999թ. նկատմամբ	արտադրվել է 1.10. 2000թ. դրությամբ	1.10. 1999թ. նկատմամբ
Արագածոտն	9964	57,8	14476	86,0	12020	88,3	157	61,6	9500	122,6	1551	167,7
Արարատ	39445	94,0	17556	97,4	88805	95,2	10091	77,9	23711	296,7	13821	105,9
Արմավիր	62704	93,5	28864	96,9	142488	94,9	40347	63,9	34052	137,7	24895	152,6
Գեղարքունիք	14802	41,9	11147	19,6	11070	85,2	-	-	1511	75,6	-	-
Լոռի	10990	92,7	20731	58,6	690	49,7	6	6,7	2661	260,6	57	101,8
Կոտայք	10977	63,7	3684	35,9	2584	41,4	3	-	2559	107,7	822	54,0
Շիրակ	23048	42,3	3922	37,8	1965	46,0	-	-	74	23,6	-	-
Սյունիք	18095	128,6	19114	103,8	6696	100,4	6	-	3335	210,8	135	146,7
Վայոց Ձոր	2428	73,2	1701	42,4	4598	79,9	160	76,2	4683	129,2	1000	125,0

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Մարզերի անվանումը	Հացահատիկ		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Բոստան		Պտուղ		Խաղող	
	արտադրվել է 1.10.2000թ. դրությամբ	1.10.2000թ. %-ով	արտադրվել է 1.10.2000թ. դրությամբ	1.10.2000թ. %-ով	արտադրվել է 1.10.2000թ. դրությամբ	1.10.2000թ. %-ով	արտադրվել է 1.10.2000թ. դրությամբ	1.10.2000թ. %-ով	արտադրվել է 1.10.2000թ. դրությամբ	1.10.2000թ. %-ով	արտադրվել է 1.10.2000թ. դրությամբ	1.10.2000թ. %-ով
Տավուշ	5204	99,8	7250	44,6	1109	45,3	99	85,3	1323	240,5	1986	154,1
ք.Երևան	1300	110,7	2024	107,1	7250	98,9	75	83,3	2810	289,1	920	44,8
Ընդամենը ՀՀ	198957	74,0	130469	59,8	279275	91,8	50944	66,3	86219	163,0	45187	125,3

Բերված տվյալները վկայում են, որ բացի պտղի և խաղողի համախառն բերքից, մնացած գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը տևական երաշտի պատճառով զգալի զիջում է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի տվյալներին: Մարզերի կտրվածքով, ընթացիկ տարվա երաշտից, առավել շատ տուժել են հացահատիկային մշակաբույսերի գծով՝ Գեղարքունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերի տնտեսությունները, կարտոֆիլի գծով՝ Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց Ձորի, Տավուշի և Լոռու մարզերի տնտեսությունները, բանջար-բոստանային մշակաբույսերի գծով՝ Արարատյան դաշտավայրի տնտեսությունները:

Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ պտղի և խաղողի համախառն բերքի աճ է արձանագրվել հանրապետության բոլոր մարզերում (բացի պտղի գծով՝ Շիրակից և Գեղարքունիքից, իսկ խաղողի գծով՝ Կոտայքից և ք.Երևանից):

Աշնանացանի ընթացքը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ

(հեկտար)

Մարզերի անվանումը	Կատարված է աշնանացան			
	սպասվելիք ծավալը*	1.10.2000թ. դրությամբ	1.10.2000թ. %-ով սպասվելիք ծավալի նկատմամբ	1.10.2000թ. %-ով 1.10.1999թ. նկատմամբ
Արագածոտն	5000	1007	20,1	68,3
Արարատ	11000	13	0,1	43,3
Արմավիր	16500	-	-	-
Գեղարքունիք	4000	2857	71,4	81,6
Լոռի	5000	95	1,9	12,1
Կոտայք	5000	2054	41,1	98,7
Շիրակ	9000	2156	24,0	23,5
Սյունիք	6000	1854	30,9	85,8
Վայոց Ձոր	1200	-	-	-
Տավուշ	2000	-	-	-
ք.Երևան	300	-	-	-
Ընդամենը ՀՀ	65000	10036	15,4	51,5

Աղյուսակում բերված տվյալները վկայում են, որ ընթացիկ տարում կատարված աշնանացանը, ինչպես ընդամենը հանրապետությունում, այնպես էլ մարզերի կտրվածքով, զգալի զիջում է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանին: Այսպես, 1.10.2000թ. դրությամբ հանրապետությունում կատարվել է 10036 հեկտար աշնանացան, որը կազմում է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 51,5 տոկոսը: Նման իրավիճակը հիմնականում պայմանավորված է աշնանացան մշակաբույսերի սերմացուի պակասով, որի հետևանքով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից աշնանացանի սպասվելիք ծավալի կանխատեսումները, ընթացիկ տարում, մոտ 35 հազ. հեկտարով զիջում է նախորդ տարվա սպասվելիք ծավալի կանխատեսումներին:

Հանրապետությունում 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ գնվել է 10439,5 տոննա հացահատիկ (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 10333 տոննայի դիմաց), որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 1,0 տոկոսով:

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

Վերանշակող կազմակերպությունների կողմից 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ (ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների) գնվել է 34117 տոննա բանջարեղեն (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 37598 տոննայի դիմաց), որը զիջում է նախորդ տարվա մակարդակին 9,3 տոկոսով:

Բանջարեղենի գնումների մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում լոլիկը՝ 99,6%, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 99,5%-ի դիմաց: Գնվել է նաև 15540 տոննա պտուղ (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 6990 տոննայի դիմաց), որը գերազանցում է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանը 2,2 անգամ: Գնված պտղի ընդհանուր ծավալի մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում խնձորի գնումները, որը կազմում է գնված ամբողջ պտղի 53,5%-ը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 91,3 տոկոսի դիմաց: Գնվել է նաև 18571 տոննա խաղող (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 27591 տոննայի դիմաց), որը զիջում է նախորդ տարվա մակարդակը 32,7 տոկոսով:

Անասնապահական մթերքների արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ

Մարզերի անվանումը	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ
Արագածոտն	6,4	110,3	48,3	101,7	22,6	120,2
Արարատ	3,9	114,7	27,6	102,2	22,4	115,5
Արմավիր	3,8	108,6	27,5	101,5	36,3	121,0
Գեղարքունիք	8,9	109,9	68,6	101,6	16,7	115,2
Լոռի	6,5	110,2	48,3	101,7	14,0	116,7
Կոտայք	4,9	108,9	37,1	101,6	82,6	121,5
Շիրակ	7,1	109,2	54,3	101,7	27,0	116,9
Սյունիք	4,9	108,9	35,1	101,7	18,8	116,8
Վայոց Ձոր	2,7	108,0	19,2	102,1	17,9	114,7
Տավուշ	4,6	109,5	30,3	101,7	19,4	116,9
ք.Երևան	0,4	100,0	2,8	103,7	25,6	114,8
Ընդամենը ՀՀ	54,1	109,7	399,1	101,7	303,3	118,3

Բերված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի հաշվարկային տվյալներով, 2000թ. հունվար-սեպտեմբերին իրացվել է 54,1 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, որը գերազանցում է 1999թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշը 4,8 հազ. տոննայով կամ 9,7%-ով, կաթի արտադրությունը նույնպես գերազանցում է 1999թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 6,6 հազ. տոննայով կամ 1,7%-ով, իսկ ձվինը՝ 46,9 մլն. հատով կամ 18,3%-ով:

Հարկ է նշել, որ 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ մսի իրացված ծավալների աճը հիմնականում պայմանավորված է անասնակերի պակասով (երաշտի հետևանքով), ինչի պատճառով ավելացել է անասնագլխաքանակի սպանդը (մորթը):